ՀՀ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արուս Համլետի Մինասյան
Գ. Վ. Պլեխանովի անվան ՌՏՀ Երևանի մասնաճյուղի
տնտեսագիտական գիտությունների ամբիոնի ավագ դասախոս,
տնտեսագիտության թեկնածու

Արտաքին առևտրային գործընթացների համապատասխանեցումը շուկայական տնտեսության պայմաններին, ազգային տնտեսության ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը, ազգային շահերի պաշտպանությունն՝ ուղղված արտաքին առևտրային հարաբերությունների կարգավորմանն ուղղակիորեն կապված են արտաքին առևտրի ազատականացման ճանապարհով երկրի բարեկեցության ավելացման հետ: Սովորաբար զարգացած և զարգացող երկրների միջև առևտրի ազատականացման հետևանքները կարող են ավելի էական դեր ունենալ զարգացող երկրների համար, որը բացատրվում է այն հանգամանքով, որ զարգացող երկրները ունեն բավականին բաց տնտեսություն, նեղ և մասամբ չկայացած սպառողական շուկա: Այս պարագայում, զարգացող երկրների տնտեսությունները միջազգային մրցակցության տեսանկյունից դառնում են ավելի զգայուն:

Արտահանման համար խիստ կարևոր նշանակություն ունի բարենպաստ մակրոտնտեսական միջավայրը: Անհրաժեշտ է պահպանել երկրում տնտեսական և ֆինանսական կայունությունը, որը նպաստավոր կլինի թե՛ ներքին, և թե՛ միջազգային առևտրա-տնտեսական գործունեության համար:

Արտաքին առևտրի քաղաքականության առավել արդյունավետ գործիքակազմն այսօր որոշակիորեն միտված է արտահանման խթանմանը: ՈՒստի այդ առումով, անհրաժեշտ է լայնորեն օգտագործել միջպետական համաձայնագրերի ինստիտուտը ներքին արտադրանքը արտահանելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ արտահանումը սկսած 2000թ. աճում է (բացառությամբ 2009թ. և 2015թ.)[1], սակայն այդ ծավալները բավականին փոքր են համաշխարհային արտահանման ծավալների համեմատ, ինչպես նաև զգալիորեն զիջում են ՀՀ առևտրային հիմնական գործընկերների համանման ցուցանիշներին: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ինչպես նաև այն փաստը, որ արտահանման ծավալների աճը հնարավոր է միայն տնտեսության մրցունակ լինելու դեպքում, անհրաժեշտ է վերլուծել ՀՀ մրցունակության բարձրացման հնարավորությունները՝ արտահանման

[1] www.armstat.am.

խթանման համատեքստում: Ազգային մրցունակությունը երկրի հնարավորությունն է արտադրելու ապրանքներ և ծառայություններ մասնավորապես միջազգային շուկայի համար[1]: Այսինքն ազգային մրցունակության կարևոր պայման է համարվում ապրանքների արտահանումը, որը Հայաստանի նման տնտեսաաշխարհագրական դիրք ունեցող երկրների համար չի կարող չունենալ որոշակի առանձնահատկություններ:

Տնտեսության մրցունակության բարձրացումը կախված է մակրոտնտեսական և միկրոտնտեսական գործոնների համախմբից: Մակրոտնտեսական կայուն միջավայրը և սոցիալական ու քաղաքական ինստիտուտները էական, սակայն ոչ բավարար պայման են մրցունակության համար:

Համաշխարհային տնտեսական ֆորումի 2017-2018թթ. Գլոբալ մրցունակության զեկույցում Հայաստանն ընդհանուր մրցունակության ցուցանիշով 137 երկրների շարքում զբաղեցնում է 73-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ դիրքերը բարելավելով վեց կետով: Համեմատության համար նշենք, որ ԵՄ երկրներից ՀՀ հիմնական առևտրային գործընկերներ հանդիսացող Գերմանիան այդ վարկանշային աղյուսակում զբաղեցնում է 5-րդ, Նիդերլանդները՝ 4-րդ, Բելգիան՝ 20-րդ, Բուլղարիան՝ 49-րդ տեղը: Սակայն համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ մրցունակության դիրքը ավելի լավ պատկերացնելու համար նպատակահարմար ենք համարում այն համեմատել Բալթյան երկրների, Ռումինիայի, Բուլղարիայի և ՀՀ հարևան երկրների համապատասխան ցուցանիշների հետ: Նախ նշենք, որ 2018թ. նշված երկրների շարքում ՀՀ մրցունակության ցուցանիշները վատագույններից է, իսկ լավագույն ցուցանիշը գրանցել է Էստոնիան՝ գրավելով 29-րդ տեղը[2]: Այնուամենայնիվ, գրեթե բոլոր երկրները վերջին չորս տարիների ընթաքում բարելավել են իրենց մրցակցային դիրքերը: Բացառություն է կազմում Լատվիան, որը կորցրել է իր դիրքերը 2 կետով (Աղյուսակ 1):

[1] “The Relations between Competition, Competitiveness and Development”, UNCTAD, Geneva, 3–5 July 2002, p. 3.

[2] Global Competitiveness Forum Report 2017-2018.

Աղյուսակ 1

Որոշ ԿԱԵ և ԱՊՀ երկրների ընդհանուր մրցունակության դիրքի գնահատման վարկանիշները 2014-2018թթ[1].

Մրցունակության ցուցանիշները	Լատվիա		Լիտվա		Էստոնիա		Բուլղարիա		Ռումինիա		Հայաստան		Վրաստան		Ադրբեջան	
	2014թ.	2018թ.	2014թ.	2018թ.	2014թ.	2018թ.	2014թ.	2018թ.	2014թ.	2018թ.	2014թ.	2018թ.	2014թ.	2018թ.	2014թ.	2018թ.
Ընդհանուր մրցունակության ցուցանիշ	52	54	48	41	32	29	57	49	76	68	79	73	72	67	39	35
Ինստիտուտներ	57	82	61	53	27	24	107	98	114	86	65	55	64	50	59	33
Ենթակառուցվածքներ	59	55	41	47	40	32	75	76	100	83	80	80	56	69	69	51
Մակրոտնտեսական միջավայր	29	23	58	29	22	15	30	25	47	38	64	101	61	48	8	65
Առողջապահություն և տարրական կրթություն	41	45	50	42	29	19	45	68	84	92	85	55	70	69	109	74
Բարձրագույն կրթություն և ուսուցում	40	42	27	29	23	19	69	54	59	70	77	69	92	87	87	68
Ապրանքային շուկայի արդյունավետություն	40	59	49	44	30	21	81	69	117	92	58	35	67	50	71	31
Աշխատանքային շուկայի արդյունավետություն	26	43	69	61	12	15	61	67	110	89	50	51	40	53	30	17
Ֆինանսական շուկայի արդյունավետություն	45	64	87	59	35	22	73	58	72	88	76	78	75	63	88	79

[1] Global Competitiveness Forum Report 2013-2014, Global Competitiveness Forum Report 2017-2018.

Տեխնոլոգիական ապահով-վածություն	38	37	35	30	29	20	44	39	54	51	72	77	68	70	50	56
Շուկայի տարո-ղունակություն	95	92	78	78	99	98	63	65	46	41	117	115	103	100	72	63
Գործա-ռարական փորձառություն	67	62	48	46	51	45	106	79	101	116	87	68	120	99	70	40
Նորարա-ռություն	70	83	44	41	31	30	105	68	97	96	103	70	126	118	51	33

Երկրի մրցունակությունը գնահատվում է ընդհանուր մրցունակության դիրքով, որն իր մեջ պարունակում է 12 համեմատական ցուցանիշներ: Ստանալով դրանցից յուրաքանչյուրի գնահատման վերաբերյալ համապատասխան ցուցանիշներ, որոշակի մեթոդաբանությամբ ստացվում է ընդհանուր մրցունակության դիրքը:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ-ում վերջին չորս տարիների ընթացքում գրանցվել է ընդհանուր մրցակցային միջավայրի առաջընթաց՝ գրեթե բոլոր ցուցանիշների գծով (բացառությամբ մակրոտնտեսական միջավայրի, աշխատանքային շ ո ւ կ այ ի արդյունավետություն, ֆինանսական շուկայի արդյունավետություն, տեխնոլոգիական ապահովվածություն):

Սակայն վատագույն ցուցանիշը գրանցվել է երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից ընդհանուր մակրոտնտեսական միջավայրի առումով: Այս ցուցանիշի գծով ՀՀ-ն 2014թ. լինելով 64-րդը, 2018թ. հայտնվել է 101-րդ տեղում: Սա կարելի է պայմանավորել տնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ-ում գրանցված տնտեսական ակտիվության անկմամբ, սակայն սա նաև արժեզրկման բարձր տեմպերի և արտաքին պարտքի մեծացման հետևանք է:

Նշենք, որ այս ցուցանիշով էական հետընթաց է գրանցվել նաև Ադրբեջանում, որը 2018թ. գրավել է 65-րդ տեղը: Ադրբեջանում տեղի է ունեցել մակրոտնտեսական միջավայրի կայունացման էական հետընթաց, որի արդյունքում Ադրբեջանը վարկանշային աղյուսակում գրավել է 65-րդ տեղը՝ զիջելով 8-րդը:

Ի հակադրություն սրան, հարևան Վրաստանում տեղի է ունեցել մակրոտնտեսական միջավայրի կայունացման էական առաջընթաց, որի արդյունքում Վրաստանը 137 երկրների շարքում գրավել է 48-րդ տեղը: Եվ չնայած ընդհանուր մրցունակության դիրքով Վրաստանը առաջ է անցել Հայաստանից՝ գրավելով 67-րդ տեղը, այնուամենայնիվ երկրում գրանցվել է

ենթակառուցվածքների և տեխնոլոգիական ապահովվածության խաթարում:

Քանի որ աղյուսակում ներկայացված ցուցանիշները վերաբերում են ամբողջ տնտեսության մրցունակությանը, ապա անհրաժեշտ է որոշակիորեն տարանջատել այն ցուցանիշները, որոնք առավել նպաստավոր կարող են լինել արտահանման խթանման համար: Այդ նպատակով առանձնացնում ենք ֆինանսական շուկայի արդյունավետությունը, ապրանքային և աշխատանքի շուկաների արդյունավետությունը, ենթակառուցվածքները, ինստիտուտները և նորարարության մակարդակը:

Ինստիտուտների կարևորությունն ընդգծելու համար նախ պետք է հասկանալ դրանց էությունը: Տվյալ դեպքում «այն կանոնների մի համակարգ է, որն ուրվագծում է տնտեսական գործակալների հնարավորությունները և սահմանում է նրանց ճանապարհները՝ ազդելու տնտեսության վրա»[1]: Այս դեպքում պետք է կարևորել հանրային և մասնավոր ինստիտուտները: Նույն զեկույցի համաձայն ՀՀ հանրային ինստիտուտները 137 երկրների մեջ դասակարգվում են 122-րդ տեղում, որի հիմնական թերություններն են համարվում օրենքների գործնական կիրառության ցածր մակարդակը, դատական համակարգի անկախության բացակայությունը, պետական պաշտոնյաների՝ որոշումներ կայացնելու վճռականության պակասը, հանրային ֆոնդերի ծախսման ցածր արդյունավետությունը: Իսկ ինչ վերաբերում է մասնավոր ինստիտուտներին, ապա Հայաստանը դասակարգվում է 55-րդ տեղում, որի պատճառը այդ ինստիտուտների ցածր որակն է: Այդ առումով խիստ կարևորվում է նրանց հնարավորությունների հարստացումը ժամանակակից կառավարման հմտություններով և գիտելիքներով:

Գործարարության զարգացման կարևոր պայմաններից է ենթակառուցվածքների բարձր որակը: Այդ ցուցանիշով ՀՀ-ն գտնվում է 80-րդ տեղում, որտեղ հաշվի են առնվում օդային և ճանապարհային հաղորդակցությունը, նավահանգիստների օգտագործման հնարավորությունը, հուսալի էլեկտրամատակարարումը, հեռահաղորդակցությունը և այլն: Դրանք օգնում են նվազեցնել գործառնական ծախսերը և մեծացնել տնտեսական ակտիվության արդյունավետությունը: Մասնավոր հատվածի համար այժմ ենթակառուցվածքների հիմնական թերություն է համարվում ճանապարհային հաղորդակցության թույլ հնարավորությունները, որոնք էականորեն խոչընդոտում են ելքը դեպի այլ երկրների շուկաներ:

Ինստիտուտների և ենթակառուցվածքների զարգացման մակարդակով աղյուսակում ներկայացված բոլոր երկրները (բացառությամբ Բուլղարիայից)

[1] **Lopez-Claros A**. The Global Competitiveness Index: Identifying the Key Elements of Sustainable Growth, WEF 2006, p. 155.

առաջ են անցնում ՀՀ-ից: Սակայն եթե նշված երկրներում այս ցուցանիշների զարգացման մակարդակը անմիջականորեն չի ազդում արտահանման խթանման վրա, ապա Հայաստանի՝ որպես ծովային ելք չունեցող երկրների համար, ենթակառուցվածքների կատարելագործումը հանդիսանում է անհետաձգելի խնդիր: Այն թույլ կտա ոչ միայն բարձրացնել երկրի մրցունակությունը, այլ նաև կխթանի ՕՈՒՆ-երի ներգրավումը: ՀՀ աշխատուժի շուկան աշխատավարձերի սահմանման ազատության իմաստով բնութագրվում է որպես ճկունության բարձր մակարդակ ունեցող երկիր: Այնուամենայնիվ, ՀՀ մասնավոր հատվածն արձանագրում է, որ աշխատավարձերի առումով հարկային խիստ պահանջները նվազեցնում են ներդրումներ կատարելու հնարավորությունները որպես էժան աշխատուժ ունեցող երկրի: Պետք է նկատել, որ աշխատուժի շուկայի արդյունավետությունը դասակարգվում է 51-րդ տեղում՝ շնորհիվ կանանց ներգրավվածության բարձր ցուցանիշի և ընկերությունների կողմից աշխատավարձերի սահմանման բարձր ճկունության ցուցանիշի: Այնուամենայնիվ, այս ցուցանիշի գծով ՀՀ-ն, 2014թ. համեմատ, դիրքերը զիջել է 1 կետով: Այլ երկրների համանման ցուցանիշի հետ ՀՀ աշխատանքի շուկայի արդյունավետության համադրումը ցույց է տալիս, որ իրոք ՀՀ այս ցուցանիշի գծով գտնվում է բավական շահեկան դիրքերում՝ առաջ անցնելով նույնիսկ Լիտվայից:

Ի տարբերություն աշխատուժի շուկայի, ՀՀ-ում վատթար վիճակում էր գտնվում ապրանքային շուկայի արդյունավետության ցուցանիշը: Այս ցուցանիշի ցածր դիրքը առաջին հերթին պայմանավորված էր մեր երկրում հակամենաշնորհային քաղաքականության անարդյունավետությամբ, ազգային շուկայում մրցակցության թուլությամբ, մաքսային ընթացակարգերի ծանրությամբ: Հակամենաշնորհային քաղաքականության անարդյունավե-տության ցուցանիշի գծով ՀՀ-ն աշխարհի 148 երկրների շարքում 2014թ. լինելով 98-րդը, 2018թ., հաշվի առնելով նեռքաղաքական դրական տեղաշարժը, հայտնվել է 40-րդ տեղում: Սակայն բարվոք չի Վրաստանի դիրքը՝ 112-րդը և Ադրբեջանինը՝ 38-րդ դիրքը: Վերջին չորս տարիների ընթացքում ապրանքային շուկայի արդյունավետության ցուցանիշի գծով ՀՀ դիրքերը բարելավել է 23 կետով՝ ուսումնասիրվող երկրների շրջանակներում գրավելով 3-րդ տեղը՝ զիջելով Ադրբեջանին (38-րդ դիրք) և Էստոնիային (21-րդ դիրք):

Ֆինանսական շուկայի արդյունավետության իմաստով ՀՀ-ն դասակարգվում է 78-րդ տեղում, որը ուսումնասիրվող երկրների վատագույն ցուցանիշներից է: Դրա համար հիմնական պատճառներ են համարվում տոկոսադրույքների և գործառնական ծախսերի բարձր մակարդակը, որոնք նվազեցնում են բիզնեսի ֆինանսավորման ոլորտում բանկերի օժանդակության գործակիցը: Նորարարական, կամ որոշ առումով ռիսկային ծրագրերը չեն ֆինանսավորվում վենչուրային ֆոնդերի բացակայության պատճառով: Բաժնետոմսերի

թողարկումը և նրանց վաճառքը տեղական շուկայում ֆինանսավորման բարձրացման նպատակով՝ գրեթե անհնար է: Այս ցուցանիշի լավագույն արդյունքը գրանցվել է Էստոնիայում (22-րդ դիրք), որը վերջին տարիների ընթացքում բարելավել է դիրքերը 13 կետով, զարգացման համանման մակարդակ ունեցող երկրների շարքում գրավելով առաջին տեղը: Սա թերևս կարելի է պայմանավորել այն հանգամանքով, որ Էստոնիան հանդիսանում է եվրոյի գոտու անդամ:

ՀՀ նորարարության ցուցանիշը 70-րդն է, որը պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են հանրային և մասնավոր ծախսումների ցածր մակարդակը նոր տեխնոլոգիաների ձեռք բերման ոլորտում, գիտական և հետազոտական ինստիտուտների վատ որակը, և ընկերությունների ու գիտահետազոտական ինստիտուտների համագործակցության ցածր մակարդակը: Վերջին տարիների ընթացքում այս ցուցանիշի գծով իրենց դիրքերը բարելավել են ուսումնասիրվող բոլոր երկրները բացառությամբ Լատվիայի:

Չնայած ԵՄ-ն և ԱՊՀ երկրները ՀՀ գլխավոր առևտրային գործընկեր-երկրներն են, սակայն ՀՀ արտաքին առևտուրն այդ երկրների հետ բավականաչափ տարբերակված չէ: ՀՀ արտահանումը դեպի նշված երկրներ զարգանում է բացառապես «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի գծով: Այս համատեքստում, կարելի է պնդել, որ ԵՄ հետ առևտրում մաքսատուրքերի լրիվ վերացումը կարող է հանգեցնել ՀՀ արտահանման տարբերակվածության ընդլայնմանը:

Աշխատանքի միջազգային բաժանման գործընթացներում ՀՀ համեմատական առավելությունը դրսևորվում են հանքահումքային ռեսուրսների արդյունահանման և արտահանման ոլորտում: Օգտագործելով նշված համեմատական առավելությունը ՀՀ-ն, ցավոք, ամբողջ ներուժով չի օգտագործում այն ռեսուրսները, որոնք կապված են բարձր ավելացված արժեք ունեցող ճյուղերի հետ և որոնց արտադրության խթանումը կախված է մարդկային կապիտալի որակից: Բարձրորակ մարդկային կապիտալի վրա հենված «նոր տնտեսությունը», այդ թվում և արագ զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերությունը ներկայումս գտնվում է զարգացած երկրների ուշադրության կենտրոնում և դրա միջոցով է կանխորոշվում վերջիններիս համեմատական առավելությունները: ՀՀ-ն ևս պարտադրված է հետևել տնտեսական զարգացման այդ վեկտորին, առավել ևս որ հումքային արտահանման շարժընթացն ունի դանդաղելու միտում, ինչը տեսանելի ապագայում կարող է հանգեցնել ՀՆԱ աճի մեջ արտաքին առևտրային գործոնի դերի նվազմանը:

Հայաստանը և ԵՄ հանդիսանում են ԱՀԿ անդամ և դրանց միջև իրականացվող արտաքին առևտուրը բավականին ազատական է, իսկ ՀՀ

արտահանումը դեպի ԵՄ հիմնականում կազմված է հանքարդյունաբերական արտադրանքից, որոնց ներմուծման մաքսատուրքերը Հայաստանի համար զրոյացված են: Ավելին, 2009-2011թթ. Հայաստանը ԵՄ հետ արտաքին առևտրում օգտվում է GSP+ համակարգից, որը Հայաստանին հնարավորություն է տալիս ԵՄ արտահանել ավելի քան 7200 ապրանքներ՝ առանց մաքսատուրքերի: Այս համակարգերը շատ ավելի արդյունավետ կազդեին ՀՀ տնտեսության զարգացման և արտահանման ընդլայնման և տարբերակման վրա, եթե դրան զուգահեռ Հայաստանում զարգանար տեղական արտադրությունը՝ ներդրումների ներգրավման հաշվին: Հակառակ դեպքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ տրամադրվում են արտոնություններ դեպի ԵՄ շուկա մուտք գործելու համար, իսկ արտահանման հնարավորությունները խիստ սահմանափակ են:

Հետագայում մաքսատուրքերի լրիվ վերացումը կարող է ապահովել լրացուցիչ օգուտներ՝ կապված ԵՄ ստանդարտների հաստատման և մաքսային վարչարարության բարելավման հետ: Ավելին, երկարաժամկետ հատվածում դա կարող է ՀՀ տնտեսության համար ապահովել մրցակցության աճ և ներդրումների ավելացում, ինչը կտանի համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ վարկանիշի բարձրացմանը: Սակայն այս գործընթացը պահանջում է ներքին և արտաքին տնտեսական քաղաքականությունների զգալի փոփոխություններ: Ներդրողների վստահությունը շահելու համար օրակարգային նշանակություն ունի տնտեսության մեջ մենաշնորհների դիրքերի թուլացումը, տնտեսության տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի վերացումը և ՀՀ ներդրումային միջավայրի բարելավումը:

ԵՄ անդամ երկրները ՀՀ համար կարող են ապահովել արտահանման ծավալների զգալի ավելացում՝ ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքի փոփոխության պայմանով: Այս պարագայում ՀՀ կառավարությունը պետք է գործնականում աջակցի դեպի ԵՄ երկրներ ՀՀ արտահանման կառուցվածքը հումքային կողմնորոշումից դեպի վերջնական պատրաստի ապրանքներ վերափոխվելու ուղղությամբ:

Հայաստանը դեպի ԵՄ շուկա իր արտահանումն ընդլայնելու զգալի ներուժ ունի հետևյալ ապրանքախմբերի գծով՝ «արդյունաբերական պաշարներ», «մթերք և խմիչք», ինչպես նաև «սպառողական ապրանքներ»:

ՀՀ առջև ծառացած այլ խնդիրների մասին , որոնք հանդիսանում են ՀՀ տնտեսական անվտանգության սպառնալիք նշենք հետևյալը.

- տնտեսության առավելապես միակողմանի բացությունը խնդիրը պետք է լուծել սահմանամերձ առևտրի զարգացման հիման վրա արտահանման խթանմամբ,
- «նոր տնտեսության» ժամանակակից ճյուղերի թույլ զարգացվածության

պատճառով համաշխարհային շուկայում ազգային տնտեսության անմրցունակության խնդիրը՝ հատուկ տնտեսական գոտիների՝տեխնոպարկերի ձևավորմամբ, ՀՀ-ում չարտադրվող, սակայն տնտեսության արդիականացմանն անհրաժեշտ բարձր տեխնոլոգական ապրանքների և կոպլեկտային սարքավորումների առանձին մասերի ներմուծման մաքսատուրքերի նվազեցմամբ, արդյունաբերական արտադրանքի, ծառայությունների, պետական վարկավորման միջոցով մտավոր սեփականության արդյունքների արտահանման խթանմամբ, արտահանման վարկերի ապահովագրությամբ, պարզեցված մաքսային ռեժիմների արմատավորմամբ՝ արտահանման համար նախատեսված ապրանքների արտադրության և վերամշակման մեջ ներմուծված մասերի, կոմպոնենտների օգտագործման ժամանակ,

- ներմուծողների կողմից ներքին արտադրողներին շուկայից դուրս մղելու միտումը կանգնեցնել տեխնիկական և թաքնված հովանավորչության հիման վրա արտադրության արդիականացման փուլում գտնվող ձեռնարկությունների ընտրանքային պաշտպանությամբ,
- տնտեսության հանցավորեցումը կանխել ոչ հավաստի հայտարարագրերի, իջեցված մաքսային արժեքի, կորուպցիայի և մաքսանենգության դեմ պայքարի ուժգնացմամբ, միջազգային կազմակերպությունների և արտասահմանյան երկրների մաքսային մարմինների իրավապահ ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցությամբ,
- գլոբալ տնտեսական կապերին ոչ արդյունավետ ինտեգրումը՝ որպես երկրի մեկուսացման սպառնալիքը կանխարգելման գործում, պետության խնդիրը պետք է լինի գործող միջազգային, տարածաշրջանային և այլ բազմակողմ առևտրա-տնտեսական կազմակերպությունների և ինտեգրացիոն խմբավորումների հետ համագործակցության ակտիվացումը:

ՀՀ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արուս Համլետի Մինասյան
Գ.Վ. Պլեխանովի անվան ՌՏՀ Երևանի մասնաճյուղի
տնտեսագիտական գիտությունների ամբիոնի ավագ դասախոս,
տնտեսագիտության թեկնածու

Համառոտագիր

Շուկայական տնտեսություն ունեցող երկրի արտաքին տնտեսական գործունեությունը պայմանավորող գլխավոր գործոնը ներքին շուկայի ազատականացումն է, որի դեպքում մակրոմակարդակում՝ առանձին ձեռնարկությունները ստանում են արտաքին շուկաների և օտարերկրյա գործընկերոջ, գործարքի գների, մատակարարումների ժամկետների և ծավալների հաշվարկների ձևերի ինքնուրույն ընտրության հնարավորություն: Իսկ արտաքին տնտեսական գործունեության իրականացման արտաքին գործոնը գլոբալ տնտեսությունն է, որով պայմանավորված է միջազգային առևտրի ծավալների աճը և ապրանքային շուկաների զարգացումը:

Հիմնաբառեր. Գլոբալ տնտեսություն, գլոբալացում, միջազգայնացում, տնտեսական անվտանգություն, մրցունակություն, արտաքին տնտեսական գործունեություն, ԵՄ, ՕՈՒՆ:

ВОЗМОЖНОСТИ ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ РА В КОНТЕКСТЕ СОДЕЙСТВИЯ ЭКСПОРТУ

Арус Гамлетовна Минасян

Старший преподаватель кафедры «Экономические науки»

ЕФ РЭУ им. Г.В. Плеханова,

кандидат экономических наук

Аннотация

Основным обуславливающим фактором внешнеэкономической деятельности страны с рыночной экономикой, является либерализация внутреннего рынка. В этом случае на макроуровне отдельные предприятия получают возможность самостоятельного выбора иностранных рынков, иностранных партнеров, затрат на сделки, срока и форм расчета объема поставки. А фактором реализации внешнеэкономической деятельности является глобальная экономика, которая обусловливает рост и развитие объема международной торговли и товарных рынков.

Ключевые слова: Глобальная экономика, глобализация, интернационализация, экономическая безопасность, конкурентоспособность, внешнеэкономическая деятельность, ЕС, ПИИ.

POSSIBILITIES OF INCREASING THE COMPETITIVENESS OF RA IN THE CONTEXT OF ASSISTANCE TO EXPORT

Arus Hamlet Minasyan
Senior Lecturer of the Department of "Economic Sciences"
of YB Plekhanov Russian University of Economics,
PhD in Economics

Abstract

The main factor conditioning the external economic activity of the country with a market economy is the liberalization of the internal market. In this case, at the macro level, different enterprises get a chance of self-selection of foreign markets, foreign partners, transaction costs, terms and calculation of the volume of supply. And the factor of the implementation of foreign economic activity is the global economy, which leads to the growth and development of international trade and commodity markets.

Keywords: Global economy, globalization, internationalization, economic security, competitiveness, foreign economic activity, EU, FDI.